

ՀոփիաճճՆԵ Ղազարյաճ

Շ. ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Շուշանիկ Կուրղինյանի ստեղծագործական կարողությունները լիապես բացահայտվում են, նրա ուղղություն պոեզիան իր գաղափարական-գեղարվեստական դարգացման գաղաթնակետին է հասնում ոուսական առաջին ուղղությանի հզոր ազդեցության տակ:

1905 թվականի հունվարի 9-ին բնկված ոուսական առաջին ուղղության տեղաշարժում է հասարակական կյանքը, աշխատավոր մարդկանց տրամադրելով ուղղություն ոգով: Ռուսական պրոլետարիատը, աշխատավորական լայն խավերը դուրս են գալիս բոնատիրության դեմ՝ ազատագրական մեծ պայքարի: Ցարին խնդրողները դառնում են մարտիկներ և ամենուրեք հնչեցնում իրենց ցասումնալից խոսքը:

— Մենք այլևս չենք կարող համբերել: Լավ է մահը, քան ամոթալի կյանքը: Ռեուղությանի փոթորկուն տարիները քաղաքականապես հասունացնում են մասսաներին, կոմունիստական պարտիան նրանց մեջ մտցնում է սոցիալիստական գիտակցություն: «Ռեուղությանի ընդամենը մի երեք տարվա ընթացքում (1905—1907 թթ.) բանվոր դասակարգը և գյուղացիությունն ստանում են քաղաքական դաստիարակության այնպիսի հարուստ դպրոց, որպիսին չէին կարողանա ստանալ սովորական խաղաղ դարգացման 30 տարվա ընթացքում: Ռեուղությանի մի քանի տարիները պարզ դարձրին այն, ինչ որ զարգացման խաղաղ պայմաններում չէր կարելի պարզ դարձնել տասնյակ տարիների ընթացքում»:

Ռեուղությանի անշեղ ընթացքը, հասարակական-քաղաքական ամենօրյա իրադարձություններն անհերքելիորեն հաստատում էին բուլշևիկյան պարտիայի վարած քաղաքականության ճշմարտացիությունը, աշխատավոր ժողովրդի աչքում արագ կերպով բարձրացնում նրա հեղինակությունը. ոտքի ելած մասսաները հոծ գնդերով գնում էին բուլշևիկյան պարտիայի ետևից: Բուլշևիկյան պարտիայի ղեկավարներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը իրենց հանճարի լույսով թափանցում էին հասարակական-քաղաքական բարդ իրադրությունների խորքը, կանխորոշում ուղղությանի ընթացքը, ազդում այդ ընթացքի վրա: 1905 թվականին գրած «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» իր նշանավոր աշխատությամբ Լենինը կարևորագույն ավանդ է մտցնում մարքսիստական էսթետիկայի գանձարանը, գրականության գործը համարելով պրոլետարական գործի մի մասը: Լենինը վճռական և խորը ազդեցություն է թողնում գեղարվեստական խոսքի հանճար Մաքսիմ Գորկու վրա, որն իր ուժերը ամբողջովին ծառայեցնում է պրոլետարական ուղղությանի շահերին, միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր աշխատավորների շահերին. դառնում սոցիալիստական ռեալիզմի հիմնադիրը:

1 Համկ(բ)Պ պատմություն, Հայպետհրատ, 1950, էջ 126:

1905—1907 թվականների ռեոլյուցիոն անցքերը մեծապես ակտիվացնում էին ճնշված բազմազգ ժողովուրդներին, նրանց ստեղծագործական ուժերը բարձրացնում նոր աստիճանի: Ռեոլյուցիայի այդ տարիներին նոր ուժով, գաղափարական նոր բովանդակությամբ ու քաղաքական նսլատակասլացությամբ է հնչում Մաքսիմ Գորկու, Յանկա Կուպալայի, Տյոտկայի՝ Ալոիզա Պասկևիչի, Լեսյա Ուկրաինկայի, Իրադիոն Եվդոզիլու, Սարիի գեղարվեստական խոսքը:

Դեռևս 1905 թվականի ռեոլյուցիայի նախօրեին, քննադատական ռեալիզմի մեծագույն վարպետներից մեկը՝ Ա. Չեխովը ասում էր. «Մի՞թե դուք չեք տեսնում, որ ամեն ինչ տեղաշարժվել է վերից վար, և՛ հասարակությունը, և՛ բանվորությունը»¹: Դեռևս 1905 թ. հունվար ամսին, բանվորներին ուղղած իր կոչ-նամակում, ի լուր աշխարհի Մաքսիմ Գորկին հնչեցնում էր իր կորովի, հաստատակամ և հուսադրող ձայնը, ավետում համաշխարհային արենա ելած նոր ուժի՝ ռուսական պրոլետարիատի գալիք հաղթանակի մասին. «Ռուսական պրոլետարիատը շարժվում է առաջ դեպի վճռական հաղթանակը, որովհետև այդ միակ դասակարգն է, բարոյապես ուժեղ, գիտակից և Ռուսաստանում իր ապագային հավատացող: Ես ասում եմ ճշմարտությունը, և այդ ճշմարտությունը հաստատվելու է ազնիվ ու անշահախնդիր պատմաբանի կողմից»²:

Ռեոլյուցիայի ճակատագրի, ճնշված բազմազգ ժողովուրդների գրականության դարգացման ընթացքի վրա խոշոր ազդեցություն է ունենում Գորկու գեղարվեստական հզոր խոսքը. «Գորկու գեղարվեստական խոսքի ազդեցությունը մեր ռեոլյուցիայի ճակատագրի վրա ավելի անմիջական և ուժեղ է, — ասում է Վ. Մ. Մուրտուզը, — քան մեր որևէ այլ գրողի ազդեցությունը: Դրա համար էլ հենց Գորկին է, որ հանդիսանում է պրոլետարական սոցիալիստական գրականության իսկական նախահայրը մեր երկրում և ամբողջ աշխարհի աշխատավորության աչքում»³:

Ռուսական ռեոլյուցիան, բոլշևիկյան պարտիան, Գորկու գեղարվեստական խոսքը բախտորոշ դեր են խաղում նաև հայ հասարակական-քաղաքական կյանքում, կենսականորեն ազդում հայ գեղարվեստական դրականության զարգացման ընթացքի վրա, ստեղծում հայ պրոլետարական-ռեոլյուցիոն պոեզիան իբրև ռեոլյուցիայի անմիջական, օրինաչափ և ճշմարիտ արտացոլում:

Գորկու վաղ շրջանի ռեոլյուցիոն ուղմանտիկան, նրա ըմբոստ ոգին, նրա հուժկու ձայնը, այլև ռեոլյուցիայի ժամանակաշրջանում սոցիալիստական գիտակցությունը մասսաների մեջ պատվաստող նրա գեղարվեստական հզոր խոսքը տիրական ազդեցություն են ունենում մեր դեմոկրատ, ռեոլյուցիոն պրոլետարական գրողների վրա, դառնում նրանց ոգեշնչումների անսպառ աղբյուրը: Գորկու ռեոլյուցիոն պաթոսը, ռեոլյուցիոն զղացումներն արտահայտող հարուստ և ինքնատիպ պատկերները ներթափանցում են հայ դեմոկրատ գրողների ստեղծագործության մեջ:

Ռեոլյուցիան իր ազդեցությունն է թողնում հայ խոշորագույն գրողների Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի ստեղծագործություններին՝ իր վրա:

¹ С. Я. Елизатьевский, Воспоминания за 50 лет, Л. 1929, стр. 305—306.

² Թոսկին, Մաքսիմ Գորկի, Հայպետհրատ, 1949, էջ 130.

³ В. М. Молотов, Статьи и речи, Москва, 1937, стр. 238—239.

Ռուսական առաջին ռևոլյուցիայի լույսի տակ է, որ Թումանյանը խորը կերպով զգում է ցարիզմի ազդահալած քաղաքականության ողջ նողկալիությունը, որոշակի տեսնում ժողովուրդների կյանքում խազացած նրա դաճճի դերը։

Ցարիզմի դեմ ունեցած ատելության և ցարի գահը հիմքից տապալելու Թումանյանի զգացումների վառ արտահայտություններից մեկը դեռևս 1903 թվականին, Շահումյանի հանձնարարությամբ, Պուշկինի «Ազատություն» օղայից կատարած նշանավոր քառատողի թարգմանությունն է.

Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց և քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ։

Ցարիզմի ազդահալած քաղաքականությանը Թումանյանը հակադրում էր ժողովուրդների համերաշխության ու եղբայրասիրության վառ տենչերը, իբրև աշխատավորության կենսական պահանջ, ռևոլյուցիայի շրջանում, հայ-թյուրքական արյունահեղ ընդհարումները կանխելու համար, հանդես գալով իբրև եղբայրասիրության դրոշակակիր։ Եվ նա, իրավացիորեն, բարձր է գնահատում իր այդ միսիան. «Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել,— ասում է նա 1906 թվականին գրած իր նամակներից մեկում,— որքան գոհ եմ, որ ականերև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան գնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազաւնական կոտորածից»¹։

Թումանյանը այդ կոտորածները դիտում է իբրև ժողովուրդների ազատագրական պայքարը ջլատելու, ժողովուրդներին այդ պայքարից հեռու պահելու ցարի նողկալի պլաններից մեկը։ Այդ փաստը նա խորին վրդովմունքով ու ցավով է նշում՝ զգալով բռնկած ռևոլյուցիայի կենարար ուժը։

Ռևոլյուցիայի շիկացած մթնոլորտում է, որ Ավ. Իսահակյանը, լցված րմրոստության նոր զգացումներով, ճնշվածներին զինված ապստամբության կոչ է անում, նրանց սրտերում վառում «անհուն վրեժի և ատելության» բոցը.

...Ո՛վ դու ցնցոտի,
Դո՛ւ, որ թշվառ ես, անտուն, անոթր,
Դո՛ւ, որ քո ձեռքին կռել ես շղթա,
Դո՛ւ, որ քրտինքդ՝ դառն ծովացած
Նզովր ես շիներ, և լուծ քո վրա—
Ես քո ժանիքը սրում եմ հիմա։

Կանգնեցնում եմ բազուկըդ ահա,
Ինչպես ռխակալ օձն անապատի,
Եվ քո բարացած բոունցքում հիմա
Ես սուր եմ դնում ահեղ ճըշմարտի։
Ի՛յվ քո սրտի մեջ վառում եմ ահա
Հուրն ազատության և իրավունքի...²։

¹ Հո վ հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5-րդ, Հայպետհրատ, 1943, էջ 298։
² Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1-ին, Հայպետհրատ, 1950, էջ 186։

Ռևոլյուցիայի շիկացած մթնոլորտում է, որ Իսահակյանը ստեղծում է «Գարիբալդիականը» (1907 թ.) և ամենաուշագրավը, գյուղացիական ապստամբությունները ռեալիստորեն արտացոլող «Շաքրո Վալիշվիլի» (1906 թ.) հիանալի պատմվածքը, կերտում վրաց, հայ և օս ապստամբ գյուղացիների գլուխն անցած Շաքրո Վալիշվիլու հմայիչ կերպարը:

Վ. Տերյանը, որի ստեղծագործության սկզբնավորումը ղուգադիպում է ռևոլյուցիային, տարվում է սոցիալիզմի բարձր գաղափարներով: Իր նամակներին մեկում «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգը նա համարում է «հրաշալի լոզունգ», «մեծ կանչ»:

Ռևոլյուցիոն տրամադրությունները, բնականորեն, թափանցում են նաև պոետի նոր-նոր կազմակերպվող ստեղծագործության մեջ, ստեղծագործությանը տալիս ակտիվ բնույթ, ռևոլյուցիոն-մարտական շունչ: Այդ տրամադրությունների անմիջական և ուժեղ արտահայտություններն են՝ «Լուսարացին նա բարձրացավ կախսողան», «Աղբյուր», «Լուել են արդեն երգերը հզոր», «Հոկտեմբերին» բանաստեղծությունները: «Ազատության քոց», «Վրեժի մահարեք դաշույնը», «մերիկ ահեղաշաշուն», «փոթորկավետ ամպ», «գալիք զարուհներ... լուր» պատկերները դառնում են նրա սիրած պատկերները: Դրանցով նա արտահայտում է իր այլող տենչերը, ցասումնալից զգացումները, դրանցով նա բացահայտ մարտակոչ է նետում արյունոտ կարգերի դեմ:

Այս դառն օրերի մթնում մահարեք,
Արևոտ խնճույթի այս սև զնդանում
Դավաճա՛ն է նա, ով լռում է դեռ,
Մատենի՛չ է, ով իր սուրը չի հանում...»¹:

Ռևոլյուցիոն առողջ զգացումներն էին, որ հետագայում հաղթանակում են, դառնում Տերյանի պոեզիայի և գործունեության տիրական շունչը, ոգին:

Եվ այն, ինչին այդ ժամանակաշրջանում, իրենց ազնվով որոնումների ճանապարհին չհասան Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Վահան Տերյանը, չհասան հասարակական կյանքում ունեցած բանվոր դասակարգի առաջավոր դերի, մարդկությունը կապիտալիստական կապանքներից ազատագրելու նրա պատմական միսիայի ըմբռնմանը, ռևոլյուցիայի հզոր լուսարձակների տակ, հասավ և պատկերեց Հակոբ Հակոբյանը:

«Բրձոլա»-ում երեք լեզուներով, 1905 թ. հուլիսին, Հակոբ Հակոբյանը հրապարակում է իր «Թեև բանվոր է, բայց թագավոր է» բանաստեղծությունը, որ դառնում է հայ պրոլետարական պոեզիայի մանիֆեստը:

Հակոբյանը առաջինն էր հայ գրականության մեջ, որ գործարանը, գործարանային բանվորական կյանքը, պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարը դարձնում է ստեղծագործության թեման: Նա առաջինն էր հայ գրականության մեջ, որ գործարանը պատկերացնում է ոչ միայն իրրև շահագործման վայր, գերեզմանոց, իր արտահայտությամբ՝ «հսկա դամբարան», այլև, որ ամենակարևորն է, գործարանը դիտում է իրրև հնոց, որտեղ կոփվում են բուրժուազիայի պերեզմանափոր՝ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն ուժերը:

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1-ին, 1950, էջ 93:

Հակոբյանը պարզ ու հիանալիորեն ըմբռնում էր իր խնդիրը. «Հեղափոխական մարքսիզմի գաղափարներն էին,— ասում է նա,— որ տարածում էին րանաստեղծություններիս միջոցով»¹։ Հակոբյանն առաջինն էր հայ գրականության մեջ, որ ռուսական առաջին ռևոլյուցիայի բոցերում ստեղծում է պատիական պոեզիա, հասարակական կյանքի երևույթները պատկերում մարքսիստական աշխարհայեցողությամբ։

Հակոբյանի նովատորական պոեզիան ձևակերպվում է ռուսական առաջին ռևոլյուցիայի, ապա և Նեկրասովի, Գորկու ստեղծագործության հզոր ազդեցության տակ, պոեզիա, որ դառնում է նախադասի ստեղծագործական լավագույն տրադիցիաների զարգացումը հայ գրականության մեջ, բաց անելով նոր ուղի՝ պրոլետարական-ռևոլյուցիոն պոեզիայի ուղին։

Հայ կլասիկ գրականության մեջ Հ. Հակոբյանը առաջինն էր, որ տեսավ սլատմության առաջնորդ ուժերը բանվոր դասակարգին, նրա զինակից դարձող աշխատավոր գյուղացիությանը։ Կապիտալիստական կարգերի տապալումը, ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրության բախտը նա տեսավ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի մեջ։ Հ. Հակոբյանի պոեզիայի իդեական բովանդակությունն է հանդիսանում ոչ միայն տիրող կարգերի տապալումը, այլև մարդկային լավագույն ապագայի, նոր, սոցիալիստական հարաբերությունների ստեղծումը։

Պրոլետարիատի ռևոլյուցիոն աշխարհայեցողությամբ պայմանավորվեց Հ. Հակոբյանի պոեզիայի ռևոլյուցիոն-գաղափարական բովանդակությունը, այդ բովանդակությունը մարմնավորող պատկերավորման հարուստ ու բազմազան ձևերը։ Նա, այսպիսով, նոր երակ, պրոլետարական-ռևոլյուցիոն պոեզիայի երակը բաց արեց հայ բաղմադարյան գրականության մեջ, այնտեղ ներարկելով ժողովրդական լայն մասսաների վրա ներազդելու հզոր ուժ։

Հակոբ Հակոբյանի բաց արած պրոլետարական-ռևոլյուցիոն պոեզիայի ուղիով են գնում Շ. Կուրդինյանը, այնուհետև Մ. Արալին և գրական մի ամբողջ սերունդ։

Իրենց ռևոլյուցիոն ստեղծագործությամբ նրանք հակադրվում են բուրժուական նացիոնալիզմին և դրանով օգնում Անդրկովկասի պրոլետարիատի պայքարին։

Սակայն, ստեղծագործական խորությամբ, ծավալով ու ակտիվությամբ այլ էր Կուրդինյանը ռուսական առաջին ռևոլյուցիայի առաջին ժամանակաշրջանում, «եթե ռևոլյուցիան բարձրանում էր՝ հոկտեմբերի ընդհանուր քաղաքական գործադուլից գնալով դեպի դեկտեմբերի զինված ապստամբություն» և այլ՝ ռևոլյուցիայի երկրորդ ժամանակաշրջանում, «եթե ցարը... հարձակման է անցնում բանվոր դասակարգի դեմ, ռևոլյուցիայի դեմ»²։

Ռևոլյուցիան խանդավառությամբ դիմավորող Կուրդինյանը բավականաչափ նախադաստրաստված էր դրան։ 1903 թվականին Ռոստով տեղափոխվելը, Ռոստովյան փոթորկոտ, ռևոլյուցիոն շարժումներով խմորվող հասարակական-քաղաքական միջավայրը քախտորոշ դեր են խաղում բանաստեղծուհու կյանքում։ Այդ ժամանակաշրջանը Հարավային Ռուսաստանում մասսայական գործադուլների ժամանակաշրջան էր, առանձնապես Դոնի ածխարդյունաբերու-

¹ Հ. Հակոբյան, Երկեր, 1931, էջ 331։

² Համի (Բ)Պ պատմություն, 1930, էջ 126։

թյան մեջ: Կուրդիսյանը կլանվում է բանվորական կյանքով, բանվորների ռևոլյուցիոն գործունեությամբ, քաղաքական գործադուլների, ռևոլյուցիոն շարժումների ավազանում ստանում է իր քաղաքական մկրտությունը: «Բանվորական ելույթները, միտինգները, ցույցերը, մանիֆեստացիաները, ժողովները,—գրում է նա իր ինքնակենսագրության մեջ,— ունենում են ինձ վրա մոգական ազդեցություն»¹: 1905 թվականին գրած «Այնտեղ եմ ապրում» առաջին իսկ բանաստեղծությամբ, Կուրդիսյանը հակադրվում է գաղափարազրկությանը, սառը, անզոր ու եսամոլ կյանքին, բացահայտում պայքարի իր ազնիվ նպատակները, իր կյանքը անվերապահորեն կապում աշխատավոր լայն խավերի հետ, իր ստեղծագործության իմաստը և «փառքը հզոր» տեսնում նրանց ծառայելու մեջ:

Եթե Կուրդիսյանն իր հոգու ամբողջ խորությամբ ու շերմությամբ սիրում է աշխատավոր ժողովրդին, իր ուժերը նվիրաբերում նրան, ապա նույնքան խորությամբ նա ատում է հինը, բռնատիրականը, կապիտալիստական ալյանդակ հարաբերությունները, իր ցասումնալից անեծքը նետում այն ամենի դեմ, ինչ կաշկանդում է մարդու միտքն ու զգացմունքը, խլում նրա ազատությունը, ռանձում հոգու թռիչքը:

Բա՛վ է... թող կորչի հիվանդ դարերի
Թողած այս ամենն ալյանդակություն.
Փշրի հիմնատակ ըստրուկ օրերի
Գարշանքի արժան ամենն հատկություն²:

Մերժելով հարստությունը, հարստությամբ ձեռք բերված ամեն փառք, Կուրդիսյանը հաստատորեն միանում է կեղեքվածների բանակին, առաջավորների հետ միասին նետվում արդաթ կռվի մեջ, տիրող կարգերը «հիմնատակ փշրելու» համար, հոգու ամբողջ խնդությամբ դիմավորում ռևոլյուցիայի արշավույսը:

Ի՛նչ թող մեր ձայնը արթնացած կյանքի
Նոր արշավույսին դիմե անհողողող,
Ի՛նչ թող մեր սիրտը մեղսալից փառքի
Խարխլած ուժից չզգա ահ ու դող...³:

Իսկ երկու օր անց, հուլիսի 29-ին, «Դս շողը տեսա» բանաստեղծությամբ Կուրդիսյանն ալյաբանորեն արտահայտում է ստեղծագործական իր վերածնությունը:

1905 թ. գրած նրա սակավաթիվ երգերի բնորոշ մոտիվը դառնում է մարտական մոտիվը, դերիշխող շունչը՝ զարթոնքի, հաղթանակի շունչը: Ռևոլյուցիայի լույսի տակ բանաստեղծուհին ըմբռնում է, որ զրկվածների միակ փրկությունը արդար ու վճռական կռվի մեջ է, որ կապիտալիստական կարգերում կուտակված վիթխարի հարստության արժանավոր տերերը բանվորներն ու գյուղացիներն են, հարստություն՝ ստեղծված նրանց քրտինքով ու արյամբ: Թանվոր դասակարգի մասին Կուրդիսյանի այդ որոշակի հայացքը արտա-

¹ Պ. Պ. թանգարան, Ե., Կուրդիսյանի արխիվ, № 17, 2-րդ ր:

² Ե., Կ ու ռ Գ Ի ն յ ա ն, Բանաստեղծություններ, 1947, էջ 37:

³ Նույն տեղում, էջ 38:

հայտնւած է 1905 թ. օգոստոսի 11-ին գրած «Անգործավորը» երգում: Բանաստեղծուհին կշտամբելով հաց մուրացող ընկեր— գործազուրկ բանվորին, ազնիվ վրդովմունքով ու ցավով ասում է.

Մինչ ե՞րբ մուրալ՝ աշխատելով—
Անվարձ, ըստրուկ և անհաց.
Մինչ ե՞րբ մուրալ աղերսելով՝
Մեծ փողոցում կուշտ մարդկանց:

Ապա՝

Ձէ՛, հարազատ, դու մի՛ մուրար—
Բնչ որ քեզ է պատկանում.
Քո գոյութիւն հացին արդար
Լոկ կովով են տիրանում¹:

Կուրդինյանը գործազուրկ բանվորին վճռական կովի կոչ է անում, կոխվ, որով նա տեր դառնա իր ազնիվ վաստակին: Բանվորի հետ, այդ պատճառով, նա փոսում է նրան հասկանալի և հարազատ լեզվով, իր խոսքին տալով մեկ մտերմական տոն, մեկ՝ վճռական շեշտ: Խոսքի այդ էմոցիոնալ երանգավորումը, բնականորեն, իր ամուր, կնիքը դնում է ոտանավորի ոխթիկայի վրա, շեղում ոտանավորի ոխթիկական խաղաղ ու կանոնավոր ընթացքը, տրամաբանական ուժեղ շեշտեր դնելով բանաստեղծութիւն իդեական բովանդակութիւնը րացահայտող վերջին քառատողի մի քանի բառերի, առանձնապէս բանաստեղծութիւնը եզրափակող «Լոկ կովով են տիրանում» արտահայտութիւն վրա:

Դասակարգային կոիվը համարելով տիրող կարգերը հեղաշրջելու, «հացին արդար» տիրանալու միակ միջոցը, Կուրդինյանը ուուլուցիոն ուժերի համախըմքման, միասնութիւն կոչ է անում: Այդ թեմային են նվիրված «Դոնի վրա» բանաստեղծութիւնը և «Գերեզմանափորը» ընդարձակ էտյուդը: Սյուժետային այդ երգում բանաստեղծուհին արտահայտում է այն միտքը, որ ազատութիւն համար մարտնչող, խավարի ու բռնութիւն զոհ դարձած հերոսների սխրագործութիւնները անմահ են, որ հարլուր-հազարները համակված նրանց ազնիվ պատգամներով ու սխրագործութիւնմբ, միասին ու միաբան ոտքի են ելել: Եվ երկիրը շրջած հերոսների ուրվականները բերում են «արթնացած կյանքի վսեմ հաղթութիւն ալետիքը», որ բռնակալութիւնն անզոր է այլևս կասեցնելու լմբոստ մասսաների ուուլուցիոն վիթխարի թափը, որ ուուլուցիայի ուրվականը շրջում է համայն Ռուսաստանով, բոցավառ ողջույն հղում ուուլուցիայի արթնացող ուժերին:

Եվ մենք երկրրում մուտք ունենք ազատ
Մոայլ խուղերում, մըշտաթաց բանտի
Քաղցի որջերի— նրկուղում աղբատ—
Եվ անօդ, անույս խորքում հանքերի...

¹ Ե. Կուրդինյան, Բանաստեղծութիւններ, 1947, էջ 46:

Ողջո՞ւյն ձեզ, ողջույն — հետևողներիդ
Արթնացած կյանքի, հոգու խորքերից,
Ողջո՞ւյն վաղամեռ թոշնած կյանքերիդ՝
Հավասարության վառ հորիզոնից՝...

Այս բանաստեղծությունը գրված է ավյունով, դինամիկ է, ունի մի շարք հաջողված պատկերներ, տիրող, ստրկացնող տրագիցիաների, սոցիալական անհավասարության, ազատակամ սիրտ կաշկանդումների դեմ ուղղված՝ բողոքի ուժգին շեշտեր։ Այն արտահայտում է կապիտալիստական կարգերի անխուսափելի կործանման իդեան։ Բանաստեղծությունն ավարտվում է դալիք բաղձալի կյանքն ավետող լավատեսական պայծառ զգացողությամբ, կոփվող հաղթանակի սիմվոլիկ պատկերով։

Ազամա մութը ահա ետ քաշվեց
Աստղերն անգույն, նիրհում են լռիկ —
Առաջին բերան աքլորը կանչեց
Եվ բարի լույսի շողերն են մոտիկ²...

«Գերեզմանափորը», սակայն, իբրև էություն, ձգձգված է, 416 տողից հիմնական նյութին հատկացված է մի փոքր մաս միայն։ Նրդի նման կառուցումը արտահայտում է բանաստեղծուհու՝ կյանքի դեռևս ոչ բավականաչափ խորը ճանաչողությունը, ցույց տալիս մեծ կտավներ կերտելու նրա թուլությունը, կյանքի երևույթների գեղարվեստական ընդհանրացման ուժի պակասը, ամբողջի ու մասի, էականի և երկրորդականի փոխհարաբերության ոչ խորը բժշկականումը։

Կուրդինյանը, այնուհետև, գրում է «Դեկտեմբերի օրերից» սյուժետային արժեքավոր բանաստեղծությունը՝ նվիրված 1905 թ. բարեկադային կոռիվների հերոսական դրվագներին։

Կուրդինյանն իր բանաստեղծությունը գրել է հենց դեկտեմբերի 9 (22)-ի օրվա դեպքերի թարմ տպավորության տակ, ռևոլյուցիայի մարտնչող բանվորների նկատմամբ արտահայտելով փոքրին համակրություն ու ակնածանք։ Նման մոտեցումը ամենից առաջ շեշտում է բանաստեղծուհու քաղաքացիական ակտիվությունը, ցույց տալիս ռևոլյուցիոն շարժումների հետ ունեցած նրա անմիջական սերտ կապը։ Կուրդինյանը ոգեշնչվում է «Դու պատենշներին իր կուրծքը տված» ամբոխի անսասան ուժով, սիրագործությամբ, գլուխ խոնարհում նրանց «ջուլտ ձեռքերին» ծածանվող կարմիր դրոշի առջև, տալիս սրբազան երգում՝ մեռնել ազատության համար։

Եվ ծունկ չոքեցի նահատակների
Շարե-շար ընկնող դեղերի առաջ...
Ու հավերժ փակվող պայծառ աչքերի
Կտակը սրտումս... ևս անցա հառաջ...

¹ Շ. Կուրդինյան, Բանաստեղծություններ, 1947, էջ 66-67։

² Նույն տեղում, էջ 68։

* *

Կուրդինյանի ռևոլյուցիոն հայացքները որոշակի արտահայտություն են գտել հայրենիքին և բնությանը նվիրված երգերում («Ոչ լավիան երգեր», «Դոնի վրա», «Աշուն», «Աշուն թող լինի»):

Բանաստեղծուհին մերթ արտի մորմոքով է վերհիշում հայրենի տխուր ու ամայի դաշտերը, մանկության օրերն իբրև վաղանցիկ երազ.

Հիմի դուք չկաք, էն գարուն օրեր
Ձմեռ են դարձեր, տխուր ու անանց...

Մերթ գոտեպնդող, զարթոնքի խոսք է ասում հայրենիքին, նրան դուրս կանչում «խոր մահվան քնից».

Բայց դու մեռած չե՛ս, ո՛վ ըստրուկ տիտան,
Դեռ քո երակում արյուն է հոսում.
Ցնցվի՛ր, սթափվիր գոնե մի՛ վայրկյան,
Գիտակից մահվան ևս չեմ ափսոսում...¹:

Ռևոլյուցիոն նման զգացումները բացակայում էին Կուրդինյանի նախորդ շրջանի հայրենասիրական երգերում, երգեր, որ լցված էին անհույս լավիանու-թյամբ ու անզոր հառաչանքներով:

Կուրդինյանի՝ 1905 թվականի գրած բնության երգերում պատկերները տեղ-տեղ արտահայտված են ռևալիստորեն, դիպուկ, կապված բանաստեղ-ծուհու ռևոլյուցիոն որոշակի տրամադրությունների հետ: «Աշուն թող լինի», «Աշուն» երգերում, Կուրդինյանը հիանալիորեն արտահայտում է իր մարտա-կան տրամադրությունները.

Հե՛յ ջան աշուն, աշխարհակալ բարբարոս,
Ոտքիս տակ դիր քո զենքերը հաղթողի.
Սիրտս զարո՞ւն, հոգիս կրակ — վառ փարոս
Պիտի զարկե թմբուկ, ջութակ ներբողի²:

Անհրաժեշտ է նշել, որ Կուրդինյանի այդ ժամանակաշրջանի բնության երգերի մեծ մասն իրենց իդեական բովանդակությամբ նպատակասլաց չեն, թույլ են պոետական արվեստով: Թվում էր, թե այդ շրջանում, երբ հասարակա-կան մթնոլորտը շիկացած էր ռևոլյուցիոն տրամադրությամբ, Կուրդինյանը, որպես այդ տրամադրություններով շնչավորված բանաստեղծուհի, նման երգեր չէր կարող ստեղծել:

Կուրդինյանի 1905 թվականի երգերում, այսպիսով, նկատելի են նեղ-անձնական ապրումների, անորոշ թախծի, ու վհատության, դեպի մենակությունը տածած զգացումների արտահայտություններ. «մենակ երգիս հետ, մենակ վերքիս՝ հետ» («Մենակ»), — ասում է նա:

Այդ շրջանում, Իսահակյանի ազդեցությամբ ստեղծած Կուրդինյանի սիրո միակ երգը («Մրմունջներ») նույնպես տառապում է պասսիվ հայեցողու-թյամբ.

¹ Շ. Կուրդինյան, Բանաստեղծություններ, Հայպետհրատ, 1947, էջ 45:

² Նույն տեղում, էջ 47:

Ա՜յս, աչերիդ ցոլքին կարոտ՝ ես հպարտ
 չող եմ տալիս դարդ ու բալի ծովի մեջ։

Այս փաստերը խոսում են այն մասին, որ Կուրդիսյանը ռևոլյուցիայի առաջին շրջանում դեռևս ամբողջովին չէր կլանված ռևոլյուցիայի պաֆոսով, որ նա լիապես չէր հաղթահարել իր սկզբնական շրջանի բանաստեղծության մեջ արտահայտված մանր բուրժուական հիվանդագին տրամադրությունները, նա դեռևս հմտորեն չէր տիրապետում իր պոետիկական արվեստին, սխեմատիզմի կնիքը դեռևս նկատելի էր բանաստեղծուհու մի շարք երգերի վրա։

Ռևոլյուցիայի առաջին ժամանակաշրջանում Կուրդիսյանի ստեղծագործությունների վրա արական-գեղարվեստական մի շարք թերությունները հաղթահարվում են ռևոլյուցիայի հաջորդ ժամանակաշրջանում՝ 1906—1907 թթ.։

§ §

Ռևոլյուցիայի ուժեղ հարվածների տակ թուլանում էր ցարական կառավարությունը, բանվոր դասակարգը ձեռք էր բերում հաղթանակ-հաղթանակի ետևից։ Ռևոլյուցիայի հարվածների տակ թուլանում էին նաև ցարական գրաքննության ամուր կապանքները։ Ռևոլյուցիոն խոսքը դուրս էր գալիս լայն ասպարեզ, թափանցում լեզալ մամուլի էջերը։

Պրոլետարական առաջավոր պոեզիան, որ ձևակերպվում էր պարտիական տնլեզալ մամուլի մեջ, ստացավ լեզալ բնույթ։ «Անլեզալ և լեզալ մամուլի տարբերությունը, ճորտատիրական, ինքնակալական Ռուսաստանի դարաշրջանի այդ տխուր ժառանգությունը,— նշում էր Լենինը,— սկսում է անհետանալ»¹։

Բսկ մի ալլ տեղում Լենինը գրում է՝ «նվաճվեց մամուլի ազատություն։ Պրաքննությունը պարզապես վերացվեց։ Ոչ մի հրատարակիչ չէր համարձակվում պարտադիր օրինակը ներկայացնելու իշխանություններին, իսկ իշխանությունները չէին համարձակվում դրա դեմ որևէ միջոց ձեռնարկել»²։ 1905 թվականի հոկտեմբերյան ռևոլյուցիան վերջ դրեց գաղափարական ստրկամտությանը, գրական ստորաքարշությունը, անիծյալ ժամանակների եզոպոսյան լեզվին։ «պրոլետարիատը վերջ դրեց այդ նողկանքին, որից շնահեղձ էր լինում ամեն մի կենդանի ու թարմ բան Ռուսիայում»,—³ ասում էր Լենինը։

Այդ ժամանակաշրջանում էր, որ լեզալ մամուլի մեջ և առանձին ժողովածուներով լույս տեսան պրոլետարական-ռևոլյուցիոն հարյուրավոր երգեր։ Բնութոշն այն էր, որ այդ երգերի և ժողովածուների վերնագրերում իսկ, պարզորոշ արտահայտված էր պրոլետարական ռևոլյուցիոն բովանդակությունը։

Այդ ժամանակաշրջանում էր, որ լույս տեսան նաև հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանի «Աշխատանքային երգեր» (Թիֆլիս, 1906), «Հեղափոխական երգեր» (1907), Գ. Կուրդիսյանի «Արշալույսի դրանքներ» (Ն. Նախիջևան, 1907) բանաստեղծությունների ժողովածուները։

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, 1949, էջ 38։

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, 1931, էջ 328։

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, 1949, էջ 39։

Դեռևս 1906 թ. սկսած լեզու մամուլի էջերում, մեկը մյուսի ետևից հրապարակվեցին Կուրդինյանի ուղղություն բանաստեղծությունները: Կուրդինյանի շուրջը ծավալվեց բուռն հետաքրքրություն. հայ աշխատավոր մասսաները սիրով ընդունեցին իրենց տաղանդավոր և ըմբոստ դատեր՝ ուղղության սիմվոլիկ պատկերով արտահայտող «Արշալույսի ղողանջներ» բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Կուրդինյանը միաժամանակ ենթարկվեց քննադատության: Բնորոշը, սակայն, այն էր, որ ժամանակին հնչող Կուրդինյանի ուղղություն երգերը համարձակ գնում էին դեպի ժողովուրդը, հետզհետե լայն տարածում էին ստանում խրճիթներում, ֆաբրիկաներում, գործարաններում, դռներում կենսական ուժ, արթնացնում ու մոբիլիզացնում աշխատավորության ուղղություն տրամադրությունները:

Ռուսական առաջին ուղղությանի երկրորդ ժամանակաշրջանը եղավ Կուրդինյանի ստեղծագործական վերելքի ժամանակաշրջանը: Այդ ժամանակաշրջանում էր, որ նա հասավ դադարափառական-դեղատվեստական բարձր աստիճանի: Այդ ժամանակաշրջանում էր, որ նա ստեղծեց հասարակական կյանքը բացահայտող և նրա առաջընթացի վրա ակտիվորեն ներգործող ուղղություն բաղմամբիվ հասուն երգեր, իր նշանավոր գլուխ գործոցներ՝ «Հանգրե՛ք ջահեր», «Բանվորները», «Հե՛տ տար քո խաչը», «Մեր ցավը մեկ է» բանաստեղծությունները, որոնք հասարակական ակտիվ դեր խաղացին, օգնեցին բանվորներին և դաշնակցներին ցարական բռնատիրության դեմ զինվելու գործում: Ուղղությանի լույսի տակ, Կուրդինյանն ըմբռնեց ուղղությանի էությունը, տեսավ արդեն իրար դեմ ու դեմ կանգնած դասակարգերին, հասարակական այն կենսունակ ուժերին, որոնք պատմականորեն կոչված էին տիրող կարգերը հեղաշրջելու, նա տեսավ բանվոր դասակարգին, նրա բնական դաշնակից գյուղացիությանը:

Բանաստեղծուհին հասավ այն դիտակցությանը, որ իր արտահայտությունները՝ կյանքի «վեմը... սրբության սրբոցը» աշխատավոր ժողովուրդն է («Գնա՛ ու գնա»): Ժողովուրդն է՝ ստեղծում կյանքի բոլոր հրաշալիքներն ու բարիքները, բայց և այդ ամենից մնում անմասն ժողովրդի ստրկացման պատճառները Կուրդինյանը որոնում էր դարավոր բռնության, տգիտության մեջ, այն բանում, որ «վրկանքի մռայլ խաչի» տակ կքած, թմբել էր ժողովրդի ոգին: Կուրդինյանը նախատինքի ծանր խոսք է ուղղում նրան, նրան համարելով «գութ մուրացող», «խոնարհ» լծի տակ. չարին խաղալիք», նրա հոգու մեջ ինքնագիտակցության կրակ բորբոքելով:

Քեզ ի՞նչ թե վառ է փայլն արևի.
Քեզ ի՞նչ լուսնական շքնաղ կերևի...
Քեզ չկա՞ արև. քեզ չկա՞ լուսին,
Զրկանքի մռայլ խաչն է քո ուսին,
Որ տգիտության աղջամուղջի մեջ
Քո թմբած հոգին սողալ տա անվերջ...¹

Կուրդինյանն իրավացի էր, պանելով, որ դարավոր բռնությունը, ստրկացումը ժողովուրդների կյանքում, իրոք, շարունակ վնասակար, քայքայիչ դեր

¹ Շ. Կուրդինյան, Բանաստեղծություններ, 1947, էջ 292:

են խաղացել: Կուրդինյանն իր ստեղծագործությունամբ հարցի այս կողմը բացահայտելով, ցույց տալով ժողովրդի կեցության մռայլ պատկերը, դրանով, անտարակույս, նպաստել է ժողովրդի քաղաքական գիտակցության, ինքնաձանաչման ուժեղացման գործին: Հայտնի է, ռուսական առաջին ռեուլյուցիայի պարտության պատճառներից մեկն այն էր, որ՝ «ռեուլյուցիայի մեջ դեռևս չկար բանվորների և գյուղացիների ամուր դաշինք ցարիզմի դեմ... գյուղացիների զգալի մասը գեռ հավատում էր ցարին և հույս էր դնում ցարական պետական դումայի վրա»¹:

1906—1907 թթ., Կուրդինյանն իր մի շարք բանաստեղծություններում («Հանգցրե՛ք ջահերը», «Սովյալը», «Սովը», «Հակապատկերներ», «Հա՛ց-հա՛ց», «Իրական երազ», «Հացը») կոնկրետ ու վառ պատկերներով բացահայտում է դասակարգային աղաղակող հակասությունները, սոցիալական անհավասարությունը՝ պատմական տվյալ ժամանակաշրջանում: Ժողովրդի ծանր կացությունը, աղքատությունը և ահեղ շահերի հասնող սովը «Հանգցրե՛ք ջահերը» բանաստեղծության մեջ ստանում է ցայտուն արտահայտություն, հասնում գեղարվեստական մեծ ընդհանրացման.

Տնքում է հողը. շնչով մահահոտ

Վիշտն է գալարվում երկրի երեսին...

Կուրդինյանը, այնուհետև, հակառակորդ դասակարգերի սուր կոնֆլիկտները, հասարակական կյանքի անհաշտելի հակասություններն առավել խորուրամբ և գեղարվեստորեն արտահայտիչ դարձնելու համար դիմում է պատկերավորման հակադրության մեթոդին, «Հանգցրե՛ք ջահերը» բանաստեղծության մեջ հասնելով պատկերավորման այդ ձևի կլասիկ արտահայտությանը: Բանաստեղծուհին ստեղծում է տերերի՝ շահագործողների և արտադրողների՝ շահագործվողների հակադրությունները, շահագործվողների ռեուլյուցիոն ակտիվությունն արտացոլող ուժգին պատկերներ, տերերին ուղղում ատելության իր ցասումնալից խոսքը, դրան հաղորդում է մոցիոնալ ներգործոն հսկայական ուժ.

Դուք տո՛ն եք տոնում խրոխտ թնդացնում

Ուրա՛խ քրքիջով բարձր պատերը,

Որոնց վրայից քաղցած, անխնդում

Ընկավ թշվառը, փշրեց ոտքերը...

Եվ լապտեր-ջահեր շողում են պայծառ

Ու լույս տարածում ձեր կուշտ դեմքերին՝

Մինչդեռ խիղճերդ կա՛րծր է ինչպես ժայռ—

Մշտական խավար՝ սրտերիդ բաժին.

Հանգցրե՛ք ջահերը...

Բանաստեղծուհին է՛լ ավելի ուժեղացնում է հակադրության պատկերը. ճոխ սեղանների շուրջը բազմած հղիացող բուրժուաների դեմ է հանում թրշվառության ու աղքատության, արհամարհանքի ու սովահարության մատնված որբուկներին, շիրիմներից կյանքի կոչում «հոշոտված մարդկանց սև ուրվականները»՝ որբուկների ծնողներին, խռովում բուրժուաների հանգիստը, նրանց շանթում կյանքի ահեղ ճշմարտության նիպակներով.

¹ ՀամԿ(բ)Պ պատմություն, Հայտնություն, 1950, էջ 124:

Եվ թո՛ղ շարեշար, արնոտ ուշաքաղ
 Հոշոտված մարդկանց սև ուրվականներ
 Խոնավ փոսերում թողած շոր դազադ՝
 Ձեզ այցի ելնեն տեսքով մահաբեր...
 Ձեզ հետ տո՞ն տոնեն ու զվարճանան
 Ալլանդակ կյանքի վայրագ քրքիջով,
 Երգեն զրկանքի երգը հոգեհան—
 Ջոր հացի երգը— մահվան մրմունջով,
 Եվ խավարի մեջ խավա՛ր գործերիդ
 Պատմեն արգասիք թշվառ անցքերի
 Ու հանեն ահեղ դժոխք ու շոինդ—
 Անարդարության սև կապանքների...
 Հանգցրե՛ք ջահերը...

«Հանգցրե՛ք ջահերը» Կուրդինյանի առաջին նշանավոր բանաստեղծությունն է, գրված 1906 թվականի դեկտեմբերին, հղիացած բուրժուազիայի խրախճանքներից ստացած ցնցող տպավորությունների տակ։ Այդ բանաստեղծությունը հրապարակվում է նույն թվականի դեկտեմբերի 30-ին և իր ռևոլյուցիոն խորը բովանդակությամբ ու գեղարվեստական բարձր կատարումով, չեղձ ընդունելություն է գտնում աշխատավոր մասսաների մեջ, ընթերցողների լայն շրջաններում։ «Հանգցրե՛ք ջահերը...» հնչում է իբրև թևավոր արտահայտություն, իբրև հզոր մարտակոչ ուղղվում բուրժուազիայի դեմ։

Եվ գրական վարպետության այն թերությունները, որ տեղ էին գտել «Գերեզմանափորը» գրվածքում, հաղթահարվում են «Հանգցրե՛ք ջահերը» բանաստեղծության մեջ, բանաստեղծություն, որն իր գաղափարական-գեղարվեստական ուժով միանգամից ռևոլյուցիոն պոետի հռչակ է բերում հեղինակին։

Աշխարհիկ տերերի անուր շահատակությունները լրացնում էին հոգևոր տերերը։ Վերջիններս իրենց հոգևոր ամբողջ զինանոցը, ոսկեծուլլ խաչի՝ մոգական ուժով, ի սպաս էին դնում աշխարհիկ տերերի արյունոտ գործերին։ Աշխարհիկ և հոգևոր տերերի սերտ կապը, հոգևոր տերերի կոնտրոլյուցիոն դերը, որ շարունակ խաղացել են ժողովուրդների կյանքում, չի վրիպել բանաստեղծուհու հայացքից։ «Հե՛տ տար քո խաչը...» հոգևորականության կոնտրոլյուցիոն դերի մերկացման մեծ թափի բանաստեղծություն է։ Կուրդինյանը ցույց է տալիս դեմ առ դեմ կանգնած ներհակ ուժերին— սև հարյուրականին— ներին և կախաղան բարձրացող ռևոլյուցիոններ ըմբոստ մարտիկին՝ հին, դեռևս հզոր, բայց մեռնող և նոր, դեռևս թույլ, բայց աճող ու հաղթանակող ուժերին։ Բանաստեղծուհին, այնուհետև, շնչավորած առարկաների, դիպուկ մակդիրների, մեծ դինամիկա արտահայտող շափ ու ռիթմի միջոցով կենդանագրում է խիզախ դատապարտյալին՝ կախաղան բարձրացնելիս, իր վեհ կեցվածքում։

Եվ ահա ինքը՝ մարդկության որդին,
 Տառապանքների, անարգ բռնության,
 Ըմբոստ մարտիկը— իր նմաններին
 Փրկելու համար ելավ կախաղան։

Կուրդիսյանն, այնուհետև, կատարում է մեծ ընդհանրացում, հասնում ժողովուրդների կյանքում «Ոսկեծուլլ խաչի» խաղացած կողուպտիչ և կործանարար դերի կլասիկ բնութագրմանը.

Հե՛տ տա՛ր քո խաչը— գործիքն հարմար
Անվերջ կեղծիքի, լպիրշ քսության...
Հետ տա՛ր մոլեռանդ, անմիտ ու անհում
Կեղեքիչների զենքը— քառաթև՝
Որ պաշտվեց երկար, երբ սմեն անգամ—
Տներում էր մարդը— մտքով կույր, անթև...
Հե՛տ տա՛ր... նրանից արյուն է ծորում,
Վազում արցունքի, շարավի հեղեղ,
Բլուրավոր, անթիվ զոհերի լքում—
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...

Քանաստեղծությունն ավարտվում է պայծառ լավատեսությամբ։ Այնպիսի ճշմարտացիությամբ ու այնպիսի վարպետությամբ է պատկերված դատապարտյալի մահը, որից զգացվում է մահացողի անպարտելի ուժը, պարզ ու համոզիչ դառնում այն ահեղ ճշմարտությունը, որ արյամբ, կախաղանների սյուների վրա, բարիկադային կռիվներում կոփվում է աշխատավորների անխուսափելի հաղթանակը։ Այս իդեան գեղարվեստական հիանալի արտահայտություն է ստացել բանաստեղծության հետևյալ բնորոշ երկտողում.

Ահա և ինքը՝ նոր լույսի զավակ
Որ ազատության հարթում է ճամփա՝...

«Հե՛տ տա՛ր քո խաչը» իր իդեական խորը բովանդակությամբ, գեղարվեստական ուժով, մեր ռևոլյուցիոն պոեզիայի կլասիկ նմուշներից է։

Ստեղծելով ռևոլյուցիոններ մարտիկի հմայիչ կերպարը, Կուրդիսյանը աշխատավոր ժողովրդին զինում է արիությամբ, դասակարգային թշնամու նկատմամբ բորբոքում վրեժխնդրության անհուն տենչով, ինքնակալության դեմ պայքարի կոչ անում, կոչ, որ ժողովուրդը ելնի «որպես տարերքի մրրիկ խուլական», իր մեծ թափի ու հոսանքի մեջ առնի մոլորվածներին, ստեղծի համաժողովրդական շարժում.

Ցնցվիր ժողովուրդ՝ տեղա՛ զարկ, հուր, բոց.
Դո՛ւ վեմը կյանքի, սրբությամբ սրբոց,
Գոյության կոթող տաճարում պղծած
Դարեր կեղեքված՝

Համաժողովրդական դիմված ապստամբության լողունգը, որպես գործողության լողունգ, առաջադրել է Վ. Ի. Լենինը դեռևս 1900-ական թ.թ. սկզբին. «Ապստամբությունը,— գրում է Լենինը,— ո՛չ թե բացարձակ, այլ կոնկրետ լողունգ է։ Մենք հետաձգում Լինք այդ լողունգը 1897 թվականին, մենք այդ լողունգը դնում էինք ընդհանուր պատրաստության իմաստով 1902 թվականին. մենք այդ լողունգը, որպես անմիջական կոչ, միայն 1905 թ. հունվարի 9-ից հետո դրինք»¹։

¹ Ե. Կուրդիսյան, Արշալույսի ղողանջներ։

² Ե. Կուրդիսյան, Բանաստեղծություններ, էջ 283։

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 9, էջ 344—345։

Տիրող բռնատիրության, անաղակող անարդարությունների դեմ դուրս եկած բանվոր դասակարգի ազատագրական պայքարն արտահայտող խանդավառ հիմն է Կուրդիյանի «Բանվորները» նշանավոր բանաստեղծությունը։ Բանաստեղծուհուն հաջողվել է մեծ խափով ու կրքոտությամբ տալ ռեոլյուցիայի վեր խոյացող ուժը, համարձակ, դիպուկ ու կոնկրետ պատկերների մեջ մարմնավորել բանվորների ըմբոստ ու հրավառ ոգին, բռնատիրության դեմ ուղղված նրանց շիկացած ցասումը, անելով լայն ընդհանրացումներ։ Այստեղ, բնականորեն, պատմողական-նկարագրական խաղաղ ձևին փոխարինված է խոսակցական կենդանի ձևը, որ մեծ արտահայտչականությամբ, կոնկրետությամբ ու անմիջականությամբ է տալիս բանաստեղծությանը Կուրդիյանը բանվորների ըմբոստությունն ու մարտական ոգին, նրանց բուռն ձգտումներն արտահայտում է հենց իրենց իսկ բանվորների մարտակոչով.

Այդ մե՛նք ենք գալիս—
Մաշված բաձկոններ, յուղոտ ու մրոտ,
Տրորված գդակ, աղտոտ մազերով,
Մեծ մասամբ դեղնած, զծուծ և բոկոտ,
Երբեմն դժգույն, երբեմն անխռով,
Երբեմն քաղցի, լուռ տառապանքի
Սև կնճիռների անջինջ կնիքով,
Երբեմն ըմբոստ արհամարհանքի
Անզուսպ վայրույթի վրեժի թույնով.
Դեռ վաղ ծերացած, հոգեմաշ ցավից,
Հույսի, թարմ օդի տենչունք դեմքերիս
Ու մարդավայել ապրելու հույսից
Դեռ խո՛ր վերքերի կսկիծ սրտերիս
Այդ մե՛նք ենք գալիս...

Բանաստեղծությունն ավարտվում է ստրկության շղթան, բռնության գահը հիմքից փշրելու բարձր զիտակցության հասած բանվորների հաստատակամ վճռականությամբ արտահայտող վառ պատկերով.

Հա՛, մենք ենք գալիս—
Դարավոր վշտի զրկանքի բովից,
Հալածանքների, գարշ ստրկության
Մոռացված խավից—
Կրծքով փշրելու փառքը տիրողին,—
Գահը բռնության— ստրուկի շղթան,—
Նոր ուղի հարթել մեր նմաններին,
Արժանի կոչման— հավասարության՝
Այսպե՛ս ենք գալիս...

Կուրդիյանի մարտական շունչը, ըմբոստ տրամադրությունները, ռեոլյուցիոն թափը, այստեղ, որոշակի ու ցայտուն արտահայտություն են գտել կրկնաձայնների միջոցով նաև, բարձր արվեստով կատարված բառի, արտահայտության, մակդիրի կրկնության միջոցով։ Կրկնությունն ուժեղացնում, իմաստ-

տավորում է էմոցիոնալ խոսքը, դարձնում այն առավել շեշտուն, առավել դինամիկ, առաջ բերում էմոցիոնալ խոսքի հսկայական ներգործոն ուժ:

«Բանվորները» բանաստեղծությունը բացվում է՝ «այդ մե՛նք եմք գալիս» և փակվում «այլպե՛ս եմք գալիս» թեավոր արտահայտությամբ, արտահայտություն, որը ողորդական առաջին ռեոլյուցիայի ժամանակաշրջանում, տիրող կարգերի դեմ հնչում էր իբրև հզոր մարտակոչ: Բանաստեղծության լիրիկական հերոսի, ավելի ճիշտ՝ հավաքական հերոսի, բանվորական կոլեկտիվ խոսքի մեջ, այդ հզոր մարտակոչի մեջ մարմնավորված է ահա բանվոր դասակարգի անխորտակելի ուժը, աներեր կամքը, դասակարգային բարձր գիտակցությունը, պայքարի մեծ թափն ու վճռականությունը:

Կուրդինյանի բանաստեղծական լեզուն, այդ պատճառով, «Բանվորները» բանաստեղծության մեջ գունեղ է ու կենդանի, նրա գործածած բառերը, մակդիրները, արտահայտությունները, այդ պատճառով, լեցուն են ավյուրով, կտրուկ են, ունեն կոշական ուժգին շեշտ, բարձր տեմպերամենտ:

Վճռական պայքարի, կապիտալիստների դեմ հաղթանակը նվաճելու անսասան հավատի վառ արտահայտություն է նաև «Կալանավորի երգը»: Շղթայի հետ ունեցած իր զրուցի ժամանակ, շղթայի՝ իբրև բռնատիրության սիմվոլի դեմ ուղղած իր մենախոսության մեջ կալանավորն ասում է.

Դե՛հ զնգա՛ քիչ է՛լ. քո ստոր փառքին
Մոտ է սև օրհաս՝
Արթնացած կյանքի վես գիտակցության
Վառ լույսն է՝ անսաս:

Պատկերելով բանվոր դասակարգի անդադրում, արդարացի և վճռակուն պայքարը, իր ստեղծագործության մեջ Կուրդինյանը ցույց է տալիս, որ այդ դասակարգը մեծ զոհողությամբ ու արյունով է ձեռք բերելու իր խլիված, ոտնահարված իրավունքները, դասակարգ, որ լիապես գիտակցում է իր պատմական միսիան և վստահ է իր վերջնական հաղթանակին:

Հառա՛ջ, միշտ հառա՛ջ... անկցի՛ գերության
Կաշկանդող շղթան.
Այսօ՛ր թե վաղը — մերն է հաղթանակ
Սուրբ ազատության:

* * *

Հայ ժողովրդի ազդային-ազատագրական պայքարը Կուրդինյանն օրգանապես միահյուսում է ողորդական պրոլետարիատի պայքարին, հայրենիքի ազատագրությունը տեսնում ազգերի համագործակցության ու համերաշխ ջանքերի մեջ, հայրենիքի բախտը սերտորեն կապում ռեոլյուցիայի բախտին: Հայրենիքի ազատագրության նման հարցադրումով Կուրդինյանը ռեոլյուցիոն թռիչք է գործում, կանգնում հայ ժողովրդի ազատագրության ճիշտ ճանապարհի վրա, ընդհուպ մոտենում պրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանին:

¹ Շ. Կուրդինյան, Արշալույսի ղողանջներ, 1907, էջ 62:

Ապրելով հայրենի սահմաններից դուրս, Ռոստովի բանվորական շարժման օջախում, Կուրդինյանը, ռևոլյուցիայի ազդեցության տակ, ավելի վառ ու ավելի ջերմ սիրով է լցվում հայրենի երկրի, հայ ժողովրդի հանդեպ, մտահոգվում նրա ճակատագրով.

Սրտիս մեջն ես, աչքիս առաջ— միշտ անուր—
Քանի կապրեմ քո վառ սերն անսահման՝
Ձի ավերե— ո՛չ ջուր, ո՛չ սուր, և ո՛չ հուր...

Բանաստեղծուհին ունի մի զգացում՝ հայրենիքը տեսնել շղթայազերծ, ինչպես ինքն է ասում՝ տանջանքի մեծ ծովը իսպառ շորացած, եվ նա իր «Նամակ հայրենիքիս» բանաստեղծությունը (1906) եզրափակում է պայծառ կանխատեսությամբ, հայրենիքի ազատությունը տեսնում «համայնացման մեծ կովի» մեջ.

Շատ մի՛ տանջվիր, խելոք մարդիկ ասում են,
Որ պիտ փոխվի աշխարհի մեջ ամեն բան՝
Ու մի արդար համայնացման մեծ կովին—
Տանջանքի տեղ սեր պիտ տիրե անսահման՝:

Հայրենիքի ազատագրության նման դիրքորոշումը Կուրդինյանի աշխարհայացքի զարգացման որոշակի արտահայտությունն է, իբրև ռևոլյուցիայի անմիջական և բարեբար ազդեցության հետևանք: Հայրենիքի ազատագրումը կապելով «համայնացման մեծ կովի» հետ, Կուրդինյանը հեռանում է հայրենասիրական իր նախորդ երդերում տեղ գտած պոսսիվ հայեցողությունից, կանգնում ազգային-ազատագրական պայքարի ռևոլյուցիոն ճանապարհի վրա:

Կուրդինյանի հայրենասիրական երգերը համակված են մեկ անհուն վրշտով, մեկ՝ մարտական, ռևոլյուցիոն տրամադրությամբ: Հայրենիքի թշվառ վիճակը, ներքին և արտաքին անողորմ ճնշումը, հայ-թյուրքական արյունոտ ընդհարումները, հասկանալի է, նրա սիրտը լցնում էին անհուն ցավով: Հայ-թյուրքական ընդհարումների ֆոնի վրա հայրենիքը բանաստեղծուհին ներկայացնում էր որպես արյունոտ մի դիակ.

Գիշեր, ցերեկ դարիբ սրտիս
Ձեր հառաչը ձեն կուտա—
Վշտից մոլոր կարոտ մտքիս
Արնոտ դիակ կերևա...

«Ավեր վաթանի» մորմոքող ցավը ցայտուն արտահայտություն է ստացել նաև «Բլրուլին» հայտնի բանաստեղծության մեջ: Դիմելով վարդը կորցրած բլրուլին, բանաստեղծուհին ասում է.

Երգե՛նք, ախպեր, ցա՛վը երգենք՝
Դու քո մեռած ա՛լ վարդի,
Երգե՛նք, ախպեր, ցա՛վը երգենք—
Իս՝ իմ ավեր վաթանի:

¹ Շ. Կուրդինյան, Բանաստեղծություններ, 1947, էջ 77:

Կուրդիստանի այդ պասսիվ վիշտը, սակայն, նրա մի շարք երգերում վերաճում է ըմբոստության, դառնում ակտիվ, հոգին հեռանող ու ռևոլյուցիոնականացնող ցասում: «Վիշտը սովորեցնում է ոչ միայն լաց լինել, այլև ատել», — ինչպես իրավացիորեն նկատում է բելոռուսական մեծ գրող Յանկա Կուպալան:

Եթե Կուրդիստանը քաղաքում տեսնում էր աշխարհիկ և հոգևոր տերերին, նրանց արյունոտ ոճիրների դեմ ծառացած, իր ուժերն արդեն ճանաչող բանվոր դասակարգին, ապա գյուղում՝ գյուղական հարստահարիչներին, աշխատավոր գյուղացիությանը, գյուղացիություն, որ ռևոլյուցիայի ազդեցության տակ արթնանում էր դարավոր նիրհից, հասնում հարստահարիչների դեմ պայքար մղելու դասակարգային ինքնագիտակցության:

Դեռևս 1905 թվականի գարնանից, Ռուսաստանում նկատվում է գյուղացիական ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական շարժումների զարթոնքը: Լենինն այդ համարում է պատմության համար շրջափոխային իրողություն:

Բովանդակ Լրկրով մեկ բնկված մասսայական գործադուլները «զարթեցրին գյուղացիության յայն մասսաներին լեթարգիական քնից»,¹ — ասում է Լենինը: Գյուղացիները հետզհետե ներգրավվում են կուլի մեջ, ելնում խոշոր կալվածատերերի դեմ, հրկիզում նրանց ապարանքները, բռնագրավում հացը, սպանում ոստիկաններին, պահանջում ազնվականների հողերը: Գյուղացիական այդ զարթոնքը տեղի է ունենում նաև Անդրկովկասյան ճնշված ժողովուրդների կյանքում: Գյուղացիական ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական շարժման զարթոնքը որոշակի արտացոլում է գտել հայ գրականության մեջ՝ արձակում և չափածոյում: Ավ. Իսահակյանի «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքը (1906), ինչպես նշել ենք արդեն, բովանդակում է ռևոլյուցիոն գաղափարախոսություն: Պատմվածքի հերոս Վալիշվիլին հանդես է գալիս որպես գյուղացիական շարժման կազմակերպված ու գիտակից ղեկավար:

Գյուղական վաշխառուների ու ցեցերի դեմ, իհարկե, գյուղացու սոցիալական բողոքը, հողային հարցը զենքի միջոցով լուծելու գաղափարը որոշակի արտահայտություն էր ստացել դեռևս Ղ. Աղայանի «Երկու բույր» վեպում (1872), Հովհ. Թումանյանի «Հառաչանք» պոեմում (1890): Տիրող կարգերի դեմ ուղղված սոցիալական այդ բողոքը, զենքի դիմելու անհրաժեշտության այդ գիտակցությունը, սակայն, չէր կրում կազմակերպված բնույթ: Անգամ Իսահակյանի պատմվածքում դեռևս աննկատելի էր պրոլետարիատի դաշնակից գյուղացին: Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցը, որ ռևոլյուցիայի ընթացքը որոշող գործոններից մեկն էր, հայ գրականության մեջ առաջինը արտացոլում է Շուշանիկ Կուրդիստանը:

Կուրդիստանի ստեղծագործության մեջ հանդես է գալիս ոչ միայն բանվորական ռևոլյուցիոն շարժումների ներգործության տակ աշխուժացած, իր «անարդար, անտանելի ու շարքաշ կյանքը» գիտակցող և ռևոլյուցիոնակա-նացող գյուղացին, այլև պրոլետարիատի դաշնակից գյուղացին:

«Գյուղացու մորմոքը» բանաստեղծության մեջ գծվում է ռևոլյուցիոնականորեն տրամադրված գյուղացու ռեալիստական պատկերը: Նա ըմբոստանում է աստծո, ապա և տիրող կարգերի դեմ: Գարուն է, վարձնել ու հոնդում է կյանքը, ձմեռվա կապանքից ազատված բնությունը կյանքի է կոչում ամեն-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 23-րդ, Հայպետհրատ, 1951, էջ 321:

քին. բնության ղարթոնքի՝ գարնան պայծառ ֆոնի վրա ավելի ակնհայտ է դառնում իրավադուրկ և ընչազուրկ գյուղացու ողբերգությունը: Ծանր ապրումների մեջ գյուղացին դիմում է աստծուն, սկզբում աղերսագին՝

Հե՛յ, փառքիդ մեռնեմ ողորմած աստված
Ես ի՞նչ պիտ անեմ.
Անտուն գլուխս ո՞ր մեկ քարին տամ
Դարդից ազատվեմ...

Ապա ցասկոտ ու ղայրալից, իր մարդկային արժանապատվության խոր գիտակցումով.

Մի՞թե ե՛ս, մարդըս, երկրի երեսից
Զըրկանքից ճընշված
Պիտ մեռնեմ, կորչեմ միջատի նրման
Ը՛րգմած, կոխկըրտած...

Այնուհետև ընդոստ ու մարտական, համբերությունը հատած գյուղացին ըմբոստացման դրոշակ է բարձրացնում ընդդեմ աստծո, ընդդեմ իր թշվառ գոյավիճակի.

Զէ՛... հընար չըկա այս անտանելի
Անարդար կյանքի
Ծանրացած խաչը քարշ տալ ուտերիս՝
Առանց փրկանքի:
Թե քեզ չի հասնի դաղված սըրտերիս
Մորմոք ու բողոք՝
Ես իմ ձեռներով մա՛հ կըպատրաստեմ
Կյանքին անողո՛ւ...¹

Կուրդինյանը հմտորեն խտացրել է գույները, միանգամայն համոզիչ պատկերներով ներկայացրել ըմբոստացող, իր մարդկային արժանապատվությունը խոր գիտակցող, հետդհետե ուղլուցիոնականացող գյուղացու կերպարը: Խրճիթը ավեր, ախոռը դատարկ, գութանը ժանգոտ, բալեքը հիվանդ. պարտքերը անծայր՝ գյուղացին, հասկանալի է, աստծո նկատմամբ կկորցնե՞ր իր հավատը, հարուստների դեմ՝ կլցվե՞ր վրեժխնդրության ազնիվ տենչով, ավելի խորը կզգար իր ոտնահարված արժանապատվությունը և պառտաստ կլինե՞ր անողոք կյանքի դատավճիռը տալ: Գյուղը և գյուղացու հոգեբանությունը հարազատորեն արտահայտող ոճական տարրերը, խոսակցական լեզուն կենդանի շունչ են հաղորդել բանաստեղծությանը, այն դարձրել են հուզիչ, ներգործոն և ճշմարտապատում:

Ցարական կառավարության արգոսյան աչքերից չէին վրիպում գյուղացիական ուղլուցիոն շարժումները, ծայր առնող ազգային-աղատագրական պայքարը և նա չէր թաքցնում իր սարսափը: «Եվ ահա, ցարական կառավարությունն իր գահն ամրապնդելու համար «նոր» միջոց է հնարում: Նա թշնամություն է սերմանում Ռուսաստանի ազգությունների միջև, նա գրգռում է նրանց իրար դեմ, նա աշխատում է պրուլետարիատի ընդհանուր շարժումը

¹ Շ. Կուրդինյան, Բանաստեղծություններ, 1947, էջ 183:

ջլատել մանր շարժումների և դրանք միմյանց դեմ ուղղել, նա հրեաների, հայերի ջարդեր է կազմակերպում և այլն: Եվ այդ բոլորը նրա համար, որպեսզի եղբայրասպան պատերազմով անջատի միմյանցից Ռուսաստանի ազգություններին և, ուժասպառ անելով նրանց, առանց դժվարության հաղթի նրանցից յուրաքանչյուրին առանձին:

Բաժանի՛ր և իշխի՛ր— այս է ցարական կառավարության քաղաքականությունը»¹:

Ցարական կառավարություն այդ աղդահալած քաղաքականությունը, աշխատավորության ռեոլյուցիոն ուժերը ջլատող, եղբայրասպան ընդհարումները պարզորոշ տեսնում էր Կուրդիսյանը, իր ստեղծագործության մեջ դուրս գալիս այդ կործանարար քաղաքականության դեմ:

«Ձալն տուր ամենքին» բանաստեղծության մեջ Կուրդիսյանը պատկերում է թշվառության մատնված գյուղը, դաշտերը՝ ամուլ, համատարած սովն ու ընչաքաղցությունը, գյուղացուն՝ «բռնության ծանր լծի տակ»: Նա իր կշտամբանքի և զղաստացման խոսքն է ուղղում դուռնացիությանը.

Նայի՛ր և շուրջդ, ինչպես բռնության ծանր լծի տակ
Կիսաքաղց, լքված վխտում են մարդիկ տենդոտ զայրույթով,
Անհույս սրտերում թուլնը վրեժի ու աննպատակ՝
Թշնամո՛ւն մոռացած, ձեռքերը ներկում եղբոր արյունով:

Խոսելով գյուղացու հարածուն թշվառության, «տենդոտ զայրույթի» մասին, ցարիզմի կազմակերպած եղբայրասպան ընդհարումների մասին, Կուրդիսյանը գյուղացուն ցարիզմի դեմ համախմբման կոչ է անում, ոգեշնչում միասնական պայքարով, մղում դեպի նոր կյանքի համար ծավալվող ռեոլյուցիոն պայքարը.

Սթափվի՛ր, թշվա՛ռ... ձա՛յն տուր ամենքին՝ ո՛ւլ ըռ դառնության,
Քո արցունքներին, ըռ մռայլ խաչին հղել է ընկեր,
Ձեռք-ձեռքի տված՝ դուրս եկ կովի դաշտ, ուր ոք մարդկության
Մի այլ, նոր կյանքի կոչնակն է հնչում — վեհ ավետարե՛ր...

Ազնիվ հայրենասիրությունը, ժողովրդի շահերի խոր գիտակցումը Կուրդիսյանին հասցնում է այլազգի ժողովուրդների շահերի պաշտպանության, նրանց համախմբման ու համերաշխության բարձր գաղափարին:

Եթե «Նրազ» բանաստեղծության մեջ Կուրդիսյանը հանգում է այլազգի ժողովուրդների նկատմամբ ունեցած սիրո գաղափարին, ապա «Երկրի ձայնը» բանաստեղծությամբ խորացնում է այդ գաղափարը, դատապարտելով աղղե-րի երկսպառակությունը, ժողովուրդներին դիմում «ազգե՛ր, միացե՛ք» համերաշխության, համագործակցության վսեմ կոչով:

Կուրդիսյանի ստեղծագործության մեջ, այսպիսով, ուժգին արձագանք է ստանում քաղաքի և գյուղի ռեոլյուցիոն շարժումների դարթոնքը, Ռեոլյուցիոն բարձր զղացումներով լցված, բանաստեղծուհին հնչեցնում է իր կորուվի. ըմբոստ երգերը. «արշալույսի լույսը դրկած՝ ըմբոստ երգեր կհչուսեմ», — պատկերավոր ասում է նա՝ Կապիտալիստական կարգերի դեմ ցատումով լի, նա իր շիկացած հոգին նետում է պայքարի հորձանուտը, պատրաստակամ իր

¹ Ի. Վ. Ստալին, երկեր, հ. 1, 1946, էջ 92—93.

իսկ մահով ուժ տալ ռևոլյուցիայի հոսանքին. «տա՛ր ինձ, մեծ հոսանք» խնդագին բացականչությամբ դիմում է ռևոլյուցիային.

...Թող իմ արյունն էլ,
Արցունքս, հառաչ ձուլվին, խառնվին՝
Թափ տան հոսանքիդ...¹

Վճռական հաղթանակի տրամագրություններով Կուրդինյանը ոգեշնչում է ռևոլյուցիոն մասնակցներին, կոչ է անում՝ անձնվեր պայքարով զալիք սերունդների հոգում բոցավառել սրբազան կուլի հրդեհը («Թող մեռնենք պատվով»), մասսաների հայացքը ուղղում դեպի լուսավոր ապագան, նրանց ոգեշնչում երջանկաբեր ապագայի հեռանկարներով.

Տեսնում եմ ես իմ ապագան պայծառ,
Ստրուկ օրերի խավարի միջից,
Սիրտս հեռւմ է բերկրանքով կայտառ
Եւ թեւովորում միտքս անուրջից:

Կուրդինյանի պայծառ հայացքը, հաղթանակի կամքն ու անսպառ եռանդը պայմանավորված են իդեական որոշակի նպատակադրմամբ, այն բանով, որ նա հավատում է բանվոր դասակարգի ու նրա զինակից գյուղացիության անտարակուսելի հաղթանակին, հետզհետե ուժեղացող ռեակցիային հակադրելով իր ռևոլյուցիոն, բմբոստ երգերը՝ «Հոգ չէ»... «Գալիք օրերում», «Իմ երգերից», «Ապագա», «Հոգ չէ թե մեռնեմ», «Դեմ առ դեմ կռիվ»:

Գալիք օրերի հույսերով խանդավառված բանաստեղծուհին ուրվագծում է զալիքի դեղեցիկ պատկերը, արտահայտում իր սոցիալական իդեան. «Հոգ չէ թե մեռնեմ» բանաստեղծությունը ռևոլյուցիոն ռոմանտիկայի գեղեցիկ նմուշ է:

Գեղեցիկ ապագային հասնելու համար, Կուրդինյանի խորին համոզումով, պետք էր տապալել կապիտալիստական կարգերը, ջարդել պետական մեքենան: Մինչդեռ ռեակցիան ուժեղանում էր. այդ ժամանակաշրջանը ռուսական առաջին ռևոլյուցիայի երկրորդ ժամանակաշրջանն էր՝ «ռևոլյուցիայի աստիճանական նահանջի» ժամանակաշրջանը:

1906—1907 թթ. Կուրդինյանի թաղմաթիվ երգերում ահա («Ազատության ղողանջները», «Միջազգային երգ», «Եկեք միանանք», «Ձեզ ձայն եմ տալիս», «Մեր ցավը մեկ է», «Մենք էլ միանանք», «Ամենքին», «Փառք ի բարձունս»), մի առանձին շեշտվածությամբ արտահայտված է ռևոլյուցիոն ուժերը մոբիլիզացնելու, բանաստեղծուհու արտահայտությամբ՝ «սրբազան միություն» ստեղծելու մեծ գաղափարը, իբրև հակադրություն աշխուժացող ռեակցիայի, իբրև ռևոլյուցիայի հաղթանակի երաշխիք: Ելնելով «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» «Կոմունիստական մանիֆեստ»-ի նշանավոր լոզունգից, Կուրդինյանը զրկվածներին համագործակցության, համախմբման կոչ է անում, հրաշագործություններ տեսնելով միության ուժի մեջ.

Դու չե՞ս հավատում — միության ուժի
Անխախտ կապերը հրաշք են գործում:

¹ Ե. Կուրդինյան, Արշալույսի ղողանջներ, 1907:

Պայքարելով բանվոր դասակարգի շարքերում միասնությունն ստեղծելու, ռևոլյուցիոն ուժերը համախմբելու համար, Կուրդիսյանը հասնում է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի կենսական հարցի ըմբռնմանը:

Բանվորների և գյուղացիների համախմբման, միասնության հարցը շեշտակիորեն արտահայտված է «Մեր ցավը մեկ է» ժողովրդական ստեղծագործության շնչով գրված բանաստեղծության մեջ: Դասակարգային կռիվում բանվորները իրենց միակ դաշնակիցներին տեսնում են գյուղացիների մեջ, գյուղացիները իրենց միակ փրկությունը տեսնում՝ բանվոր դասակարգի անմիջական օգնության մեջ: Ըստ էության Կուրդիսյանը ճիշտ է կողմնորոշվում բանվոր դասակարգի ղինակցի հարցում՝ հուսալի հենարան համարելով շքավոր գյուղացիությանը, այդ պայքարում օգնությունը տալով բանվոր դասակարգին: Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում հարցի նման լուծումը արժանի է լուրջ ուշադրության: Բանաստեղծությունը սկսվում է աննկարագրելի աղքատության մեջ տառապող գյուղացիներին ուղղած բանվորների շերմագին դիմումով:

Հե՛յ դուք զուլումի, դարդի ընկերներ,

Եկեք մեզ մոտիկ.

Մեր ցավը մեկ է, մեկ են արցունքներ,

Մենք՝ նման մարդիկ:

Մենք ծով արյունով, մենք՝ լեռ բռնեցող,

Տկլոր ու քաղցած.

Դուք՝ լեռ բռնեցող, դուք ծով արցունքով՝

Սոված ու ընկճված:

Մենք անարգ գերի, ձեռներիս շղթա,

Մենակ սև անոթ,

Դուք՝ ճորտ ուժեղի, տանջված անխնա,

Ձեռ գտնի ոչ-ոք:

Ձեռ ցավին ցավող, ձեռ վշտին լացող

Բացի մեզանից.

Ինչպես որ մենք էլ՝ անկեղծ խղճացող՝

Բացի ձեզանից...

Խորը գիտակցելով համագործակցության մեծ ուժը, բանվորները աշխատում են իրենց հետ միասին պայքարի մեջ ներգրավել աշխատավոր գյուղացիությանը՝ բռնադատության, չարախնդող ռեակցիայի դեմ, հանուն հաղթանակի:

Ոճիրն է խնդում, մեր շուրջը պարում,

Մայեդին խինդով՝

Որ մենք մենակ ենք, շուտ ենք պաշարվում

Իրա ցանցերով:

Հե՛յ դուք զուլումի, դարդի ընկերներ,

Արի՛ք, միանանք՝

Կանգնենք կողք-կողքի, հպարտ, անվեհեր

Եվ լավ իմանանք՝

Թե՛ ձեզ հա՞ց է պետք. մեզ սո՛վն է լավում,

Ուտել ենք ուղում.

Թե՛ ձեզ հո՞ղ է պետք. մենք շունինք անկյուն,
Ապրել ենք ուզում,
Թե դուք տանջվո՞ւմ եք ծանր լծի տակ,
Փոռում Բանտերում՝
Մենք, մեր արյունի լճում անհատակ
Ամեն օր խեղդվում:
Հե՛յ դուք զուլումի, դարդի ընկերներ,
Իկե՛ք մեզ մոտիկ.
Մեր ցավը մե՛կ է, մեկ են արցունքները
Մենք՝ նման մարդիկ:

Ռուսական առաջին ռեցիտացիայի շրջանում, ցարիզմը տապալելու համար, Կոմունիստական պարտիան վարում էր մենշևիկներին հակադիր տակտիկա: Նա մեծ ջանք է գործադրում վերացնելու ռեցիտացիոն ուժերի մանրատվածությունն ու ցրվածությունը, ռեցիտացիայի գլուխն անցկացնելու քունվոր դասակարգի գիտակից մասին, «համախմբելու Բալախին և Վյուդի ռեցիտացիոն տարբերին» (Համ. Կ(բ)Պ պատմություն):

«Մեր ցավը մեկ է» և դեպի միասնությունը կոչող բազմաթիվ բանաստեղծություններով, որոնք իր ժամանակին՝ 1906—1907 թվականներին հրապարակվում են մամուլում, բանաստեղծուհին, անշուշտ, օգտակար դեր էր խաղում բանվոր դասակարգի բաղադրական գիտակցության կազմակերպման, բանվորների և գյուղացիների միասնության ամրապնդման, ցրված ուժերի համախմբման շափազանց կարևոր գործում:

Կուրդինյանը ռեցիտացիայի, իր արտահայտությունը՝ «սուրբ կովի» հաղթանակին սերտորեն մասնակից է դարձնում կանանց: Նա առաջինն է հայ գրականության մեջ, որ ցայտունորեն պատկերելով կնոջ ստրկական վիճակը, նրա ազատագրությունը տեսնում է ռեցիտացիայի հաղթանակի մեջ: Այսպես չէին մտածում հայ խոշորագույն կլասիկները՝ Աղայանը («Երկու քույր»), Սունդուկյանը («Պեպո», «Քանդած օջախ», «Խաթաբայա»), Թումանյանը («Անուշ», «Մարո», «Անիծած հարսը»), Շիրվանզադեն («Ցավազարը», «Նամուս», «Պատվի համար»): Ծշմուրիտ է, նրանք բազմակողմանիորեն պատկերում էին կնոջ ողբերգությունը՝ նահապետական և բուրժուական ընտանիքում, սեփականատիրական հասարակության մեջ, ստեղծում էին արվեստի անմահ կոթողներ, քննադատական ռեալիզմի այդ խոշոր ներկայացուցիչներին, սակայն, աշխարհայացքային սահմանափակությունը խանգարում էր տեսնելու կնոջ ազատագրման իսկական ճանապարհը՝ սոցիալիստական ռեցիտացիայի ճանապարհը:

Ելնելով ռեցիտացիոն ճիշտ դերբորոշումից, «Մենք էլ միանանք» բանաստեղծության մեջ, Կուրդինյանը կանանց կոչ է անում՝ բռնատիրության դեմ ելնել ակտիվ ու վճռական պայքարի, կանանց գիտելով տղամարդկանց հավասար, իրրև հասարակական-կենսական մեծ ուժ:

Ա՛րի, բուրիկ ջա՛ն, ձե՛ն տանք աշխարթին,
Մեր ընկերներին թեզ ոտքի հանենք.
էս սե, դարաքաշ, անվայել կյանքին
Մի ելք, մի ուղիղ ճամբա բաց անենք:

Ա՛րի, քուրիկ ջա՛ն, մենք էլ միանանք,
էն մեծ, սուրբ կովին եզնինք մասնակից.
Հերիք շղթայված ու գերի մնանք
Գուման մտքերով, շշմած զրկանքից՝:

Կանանց ազատագրման նման ըմբռնումը, բանվոր դասակարգի ազատագրական պայքարին կանանց մասնակից դարձնելու կենսական անհրաժեշտության նման հարցադրումը մեր պոեզիայում առաջինը ներմուծում է Կուրդինյանը: Այս պատիվ է բերում բանաստեղծուհուն և ցույց է տալիս մեր գեղարվեստական գրականության գաղափարական հարստությունը:

Կնոջ դարավոր ստրկական վիճակը սիմվոլիկ պատկերով արտահայտված է Մ. Գորկու բարերար ազդեցությամբ գրված «Արծվի սերը» նշանավոր բանաստեղծության մեջ: Քարափին իշխող արծիվը, հիացած աղջկա գեղեցկությամբ, ցանկանում է նրան տանել դեպի բարձունքները, դեպի ազատություն, սակայն նրան տեսնելով բռնություն ու թշվառություն մադիլներում, թևազուրկ, հառաչում է ու լալիս.

Հե՛յ, ջա՛ն աղջիկ, մարա՛լ աղջիկ,
Ափսո՛ս թռչել չգիտես.
Էդ ծմակում լռիկ-մնչիկ
Պիտի թռչնես ծաղկի պես:

Ապա անում զարմացական հարցումներ՝

Յարաբ թռչել հե՛շ չգիտես,
Քեո՛ր՝ ծնեց առանց թև.
Յարաբ կյանքում հե՛շ ուզած չես
Օդում թռչել միշտ թեթև...

Ազատորեն ճախրող արծվի պատկերով Կուրդինյանն ավելի է ընդգծում և կոնկրետացնում իրավադուրկ կնոջ վիճակը:

Կուրդինյանն հանդես չի գալիս պասսիվ հայեցողի դերում. պատկերելով կնոջ «անվայել կյանքը», նա միաժամանակ այդ կյանքը ռևոլյուցիոն ճանապարհով փոխելու կոչ է անում. տիրող հասարակական հարաբերությունները հեղաշրջելով հասնել կնոջ ազատագրությանը— այս է ահա Կուրդինյանի սիրո երգերի գաղափարական բովանդակությունը:

Կուրդինյանը մենամարտի իր խիզախ ձեռնոցն է նետում բիրտ կյանքի դեմ: Անձնական սերը զուգակցելով հասարակականին, նա կամենում է ըմբոստների հետ միատեղ դնալ «դեպ ընդհանուր նպատակ», իրեն կոչելով ազատագրական պայքարի զինվոր:

Նրգս էլ ամենքին, սիրտս էլ ամենքին—
Մտքերս բոլոր՝

Այս փշոտ ճամբին դարձել են զինվոր՝:

Սիրո երգերում Կուրդինյանը դուրս է գալիս անհատական ապրումների անձուկ սահմաններից, դրանք ծառայեցնում հասարակական-քաղաքական իր

¹ Ե. Կ ու ռ դ ի ն յ ա ն, Արշալույսի զոդանջներ:

² Նույն տեղում:

նպատակներին, ծառայեցնում աշխատավորությանը, ինչպես ինքն է իր մի բանաստեղծության մեջ հաջող ձևակերպում՝ «իրեն մոռացած սմենքի համար» («Ազատ, ինքնիշխան»)։

Իդեական միևնույն նպատակասլացությամբ են գրված նաև Կուրդիսյանի բնության երգերը։ 1906—1907 թվականներին ստեղծած, երեք տասնյակի հասնող այդ երգերի հիմնական ոգին լավատեսությունն է, պայծառ խոհերն ու զգացումները («Առաքացին», «Մեզի հուշերից», «Գարուն», «Ողջուն քեզ դարուն», «Աշուն», «Մի լար իմ սիրտ» և այլն)։ Ռուսական առաջին ուղևորության ժամանակաշրջանի Կուրդիսյանի բնության երգերում տեղ գտած ակնհայտ թերությունները՝ դեռևս նկատելի պասսիվ ու հայեցողական տրամադրությունները գրեթե ամբողջովին հաղթահարվում են այս ժամանակաշրջանում։

Կուրդիսյանը ցանկանում է միշտ գարուն լինի, մարդը անվիշտ, ներդաշն բնության հետ՝ «ժպտար բնություն, ժպտեին մարդիկ», — ասում է նա։ Այդ պատճառով էլ նա ողջունում է գարնան մուտքը, գարնան մեջ սիմվոլացնում լուսավոր ապագան.

Ողջուն, բյուր ողջուն — նու՛ր կյանքի գարնան,
Որ այս գարնան պես ժրպտա ամենքին,
Որ տառապալից բիրտ կյանքին մարդկան
Մի օր պիտ փայլե լույսով թանկագին —
Ողջուն այն գարնան...

Կուրդիսյանը չի ընկճվում բնության հզորության առաջ. մարդուն համարելով բնության հյուսեն, միաժամանակ հպարտության զգացումով է լցվում մարդու ստեղծագործ հզոր ուժի հանդեպ, հավատալով բնությունը ճանաչելու և վերափոխելու նրա անսպառ կարողություններին.

Եվ ինձ զգում եմ հպարտ ու վսեմ՝
Նայում եմ շուրջս իշխող հայացքով,
Որ նրա մասն եմ, մի փոքրիկ հյուսեն՝
Միտքս ամեն տեղ — անհաղթ թռիչքով։

Ըմբոստ մասսաներին պայքարի կոչող Կուրդիսյանի այս երգերը, բնականորեն, կենսախիռն են ու բարձր տրամադրությամբ լեցուն։ Բնությունից առած նրա պոետական գույները վառ են ու պայծառ, ինչպես ասում է ինքը՝ «երկնածին ու բոսոր»։ Նրա պոեզիային բնորոշ չեն բնության մռայլ գույներն ու անհրապույր պատկերները, աշնան անձրևոտ օրերին նա «ծաղկող գառուն է երազում»։ Ծառացած բնության ու անարդարության դեմ, բնականորեն, ա մի առանձին սեր է տածում դեպի բնության հզոր ուժերը՝ փոթորիկը, այծակն ու որոտը, դրանց մեջ գտնելով իր հոգուն հարազատ զգացումներ, րտահայտելով իր ըմբոստ հոգու խոյացումները.

Մրրիկն եմ սիրում, կայծակն ու որոտ,
Երկնի կռիվը, դղրդյունն ահեղ։

Այստեղ և մի շարք այլ երգերում ակնհայտ է մեծ Գորկու վաղ շրջանի ուղևորին ռոմանտիկ պոեզիայի ազդեցությունը։ Իրավացի է բանաստեղծին իր մուսան համարելով «հուսաշող ու չքնաղ» («Աշուն»)։

Պատկերելով բանվորների, գյուղացիների սոցիալ-իրավական ծանր կացությունը, 1906 թ. հրապարակած «Այնտե՛ղ գնացեք» բանաստեղծությամբ, Կուրդինյանը միաժամանակ նշում է այդ կացությունից դուրս գալու ելքը։ Նա երիտասարդությանը կոչ է անում՝ գնալ դեպի գյուղ, ուր սոված գեղջուկը խարխափում է խավարի մեջ ու «կծղած արտերը արցունքով թրջում», գնալ դեպի հանքերն ու գործարանները, «ուր բանվորն է բեռի տակ տնքում», դեպի բանտերը, ուր տառապում է շղթայակապ հերոսը, այնտեղ, ուր իշխում է թշվառությունը, անհույս կյանքը, շարիքը։ Մարդու ահբավ տառապանքներին, տիրող դաժան կարգերին Կուրդինյանը հակադրում է սոցիալիզմը, իբրև փրկչական միակ ճշմարիտ ուղի՝ բանվոր դասակարգի, գյուղացիության ազատագրությունը տեսնում «սոցիալիզմի լույսի» մեջ։

Այնտե՛ղ գնացե՛ք— սոցիալիզմի
 Լույսը տանելու այն մութ խավաբում՝
 Ուր որ իդեալը խուլ տանջանքների
 Մեղսոտ սեղանին միշտ զոհ է բերվում.
 Այնտե՛ղ գնացե՛ք— նրանց հավասար
 Մարդկային կյանքի լուծը տանելու՝
 Որպես «հովիվ քաջ» յուր հոտի համար
 Պատասխանատու...
 * * *

«Այնտե՛ղ գնացեք» բանաստեղծությունը հայ պոեզիայի գաղափարական նվաճումներից է, ուսական առաջին ուսուցիչի, սոցիալիզմի գաղափարների որոշակի ազդեցության գեղարվեստական արտահայտությունը։

* * *

Քրական գործունեության սկզբնավորման շրջանում իսկ, 90-ական թվականների վերջում, գեռես ոչ ինքնատիպ ստեղծագործության մեջ որոշակի է Շուշանիկ Կուրդինյանի հասարակական վշտի զգացումը, դեպի ժողովուրդը, հայրենիքը ունեցած նվիրական սերը («Տուր ինձ քնարդ»)։ Սակայն այդ վիշտը և հայրենասիրությունը կրում են չափազանց անորոշ և պասսիվ բնույթ, ակտիվորեն չեն ուղղված տիրող կարգերի, բռնատիրության դեմ։ Զհասկանալով հասարակական կյանքի օրինաչափությունները, չգտնելով սոցիալական շարիքների արմատները, բնականորեն, նա կանգնում էր փակուղու առաջ, նրա երգերը լցվում էին դառն զգացումներով ու ծանր խոհերով։

Տեղափոխությունը Ռուստով, ուսուցիչին տրամադրություններով խմորվող ողորդված փոթորկուն հասարակական կյանքը, ուսական առաջին ուսուցիչի բախտորոշող դեր խաղացին Կուրդինյանի կյանքում։ Ռուսուցիչի հզոր ազդեցության տակ հիմնովին փոխվեց Կուրդինյանի ստեղծագործության գաղափարական-գեղարվեստական բովանդակությունը, նրա և՛ աշխարհայացքը, և՛ ստեղծագործության թեմատիկան։

Ռուսական ուսուցիչի հզոր ազդեցության տակ ձևակերպվեց հայ պոեզիտարական ուսուցիչին պոեզիան։ Հակոբ Հակոբյանը սկզբնավորեց և զարգացրեց այդ պոեզիան։

Շուշանիկ Կուրդինյանը առաջիններից մեկն էր հայ գրականության մեջ, որ գնաց Հակոբ Հակոբյանի բաց արած պրոլետարական ուսուցիչին պոեզիայի ուղիով։ Բանաստեղծուհին հասավ այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի հիմքը, իր արտահայտությամբ՝ «վեմը... սրբության սրբոցը» աշխա-

տավոր ժողովուրդն է։ Ժողովուրդն է կերտում պատմությունը, ստեղծում նյութական և հոգևոր կյանքի բոլոր հարստություններն ու հրաշալիքները, բայց ինքը մնում անմաս։ Տիրող կարգերի, հարստահարիչների դեմ խոր ատելությունամբ լցված, Կուրդինյանը 1905—1907 թթ., իր բազմաթիվ երգերում ճշտորեն պատկերում է դասակարգային անհաշտելի հակասությունները, ժողովրդի սոցիալական ծանր կացությունը և տիրող կարգերը, ցարիզմը տապալելու բացահայտ կոչ անում։ Նրա ստեղծագործության մեջ արտացոլվում են ոչ միայն սոցիալական աղաղակող հակասությունները, այլև այդ հակասությունները լուծելու կոչված բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարը, գյուղացության մեջ զարթնող ռևոլյուցիոն տրամադրությունները, բանվորների և գյուղացիների դաշինքը։

1905—1907 թվականներին, Կուրդինյանի բազմաթիվ երգերում առանձին շեշտվածությամբ արտահայտվում է ռևոլյուցիոն ուժերը համախմբելու, սրբազան միություն ստեղծելու գաղափարն իբրև հակադրություն աշխուժացող ռեակցիայի, իբրև ռևոլյուցիայի հաղթանակի երաշխիք։

Հայ ժողովրդի ազգային-աղատադրական պայքարը օրգանապես միահյուսելով ռուսական պրոլետարիատի պայքարին, Կուրդինյանը հայրենիքի փրկության հարցը դուրս է բերում նեղ-ազգային շրջանակներից։ Հայրենիքի ազատությունը նա չի դիտում պրոլետարիատի մղած պայքարից դուրս ու մեկուսացված, ընդհակառակը, հայրենիքի ազատությունը Կուրդինյանը տեսնում է ազգերի համագործակցության ու համերաշխ ջանքերի մեջ, հայրենիքի բախտը սերտորեն կապում է ռևոլյուցիայի բախտին։

Ազնիվ հայրենասիրությունը, ժողովրդի շահերի խորը գիտակցումը Կուրդինյանին հասցնում է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի կենսական անհրաժեշտության գաղափարին, այլազգի ժողովուրդների շահերի պաշտպանության, համախմբման ու համերաշխության՝ ինտերնացիոնալիզմի գաղափարին։ Դատապարտելով ազգերի երկպառակությունը, Կուրդինյանը ժողովուրդներին դիմում է «ազգե՛ր, միացե՛ք» համերաշխության, համագործակցության մարտակոչով։

Կուրդինյանը, այնուհետև, առաջինը հայ գրականության մեջ՝ պատկերելով կոչ ստրկական վիճակը, նրա ազատագրությունը տեսնում է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի մեջ և նրան բռնատիրության դեմ ակտիվ ու վճռական պայքարի կոչ անում, կանանց դիտելով տղամարդկանց հավասար, իբրև հասարակական-կենսական մեծ ուժ։

Պատկերելով բանվորների, գյուղացիների սոցիալ-իրավական ծանր կացությունը, մարդու անբավ տառապանքներին, տիրող դաժան կարգերին Կուրդինյանը հակադրում է սոցիալիզմն իբրև փրկության միակ հշմարիտ ուղի, մարդկության ազատագրությունը տեսնում ժողովրդի լույսին՝ մեջ։

Գալիք օրերի հուլիսներով խանդավառված, բանաստեղծուհին իր մի քանի երգերում ուրվագծում է գալիքի գեղեցիկ պատկերը։ Գալիք հաղթանակին նվիրված Կուրդինյանի երգերը, այդ պատճառով, լի են պայծառ ու անսասան հավատով, հավատ, որ պայմանավորված է բանվոր դասակարգի հաղթանակի բարձր գիտակցումով։

Անխնա պայքար մղելով իդեալականության ու տգիտության, ստրկամտության ու ստորաքաղաքության դեմ, Կուրդինյանն իր մարտաշունչ, հաղթանակի հուսովառ երգերով, անկասկած, նպաստել է բանվորների, գյուղացիների

քաղաքական գիտակցության բարձրացմանը, աշխատավորությանը զինել ցարիզմի դեմ:

Ազատագրական պայքարի ռևոլյուցիոն պաթոսը, այն կենսասիրությունը, հասարակական կյանքի այն խորը զգացողությունը, որ բնորոշ էր Կուրդինյանին, իրենց ամուր կնիքը գրին բանաստեղծուհու պոետիկական արվեստի վրա, մարմնավորվեցին նրա ստեղծած պատկերների, արտահայտչական բազմազան ձևերի մեջ, նրա ստեղծագործությանը տվեցին ինքնատիպություն: Կուրդինյանին մեծ մասամբ հաջողվել է բնության ու սիրո մոտիվները, բնության տարերքն ու պայծառ գույները, պատկերավորման բազմապիսի միջոցները դարձնել իր ռևոլյուցիոն հայացքներն ու լոբոստ տրամադրություններն արտահայտող ակտիվ գործոններ: Կուրդինյանի բանաստեղծական լեզուն, այդ պատճառով, առանձնապես ռևոլյուցիոն երգերում, հախուռն է ու կրքոտ, ունի հրապարակախոսական ջերմ շունչ, կոշական ուժգին շեշտ: Կուրդինյանի բանաստեղծական լեզուն բնորոշ է ժողովրդական լեզվի, բարբառների, գրաբարյան ձևերի, մեծ մասամբ տեղին, դիպուկ և իմաստալի օգտագործմամբ, ոտանավորը՝ իր երաժշտականությամբ, տողամիջի և տողավերջի ուժեղ հանգավորմամբ, բազմազան չափերով: Կուրդինյանի պոետական լեզուն լինելով հարուստ ու բազմաառար, թեև ոչ միշտ, ստացել է նյութին համապատասխան ոճավորում, ցուցաբերելով հայ լեզվի ճկունությունն ու կենսունակությունը: Այդ հատկանիշներն, անշուշտ, հզորացնում են Կուրդինյանի բանաստեղծական խոսքը, դարձնում այն առավել կենսունակ, այդ հատկանիշները դառնում են նրա իդեաներն արտահայտող ակտիվ միջոցներ:

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանը եղավ Կուրդինյանի ստեղծագործության զարգացման գագաթնակերտը: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին նրա գաղափարապես ու գեղարվեստորեն բարձր ու մնայուն երգերը («Հանգցրե՛ք ջահերը», «Բանվորները», «Հե՛տ տար քո խաչը», «Մեր ցավը մեկ է»):

Կուրդինյանի պոեզիան ձևավորվեց ու զարգացավ ռուսական իրականության մեջ. ռուսական առաջին ռևոլյուցիայի, ռուս գրականության, առանձնապես Գորկու ստեղծագործության հզոր ազդեցության տակ դարձավ ակտիվ ու ներգործոն, կենսական ու մարտաշունչ պոեզիա՝ տոգորված ժամանակի առաջավոր հասարակական-քաղաքական գաղափարներով: «Ես ինձ շատ պարտական եմ զգում ռուսական կյանքին, վերածննդի փոթորկոտ օրերին և հատկապես ռուսական պրոլետարիատին,— երախտագիտության խորին զգացումով ասում է բանաստեղծուհին,— Ռուսաստանը իմ քաղաքական մոտիվների հայրենիքն է»¹:

Կուրդինյանի ստեղծագործության լավագույն մասը հաստատորեն մտել է հայ պոեզիայի գանձարանը: Ունենալով ռևոլյուցիոն խոշոր նշանակություն, աշխատավորական լայն մասսաներին մոբիլիզացնելու, դեպի քաղաքական պայքարը մղելու ուժ, այդ պոեզիան մեր օրերում չի կորցրել իր գաղափարական-գեղարվեստական արժեքը:

Մեծ ավյունով ու թափով գրած մարտաշունչ-ռևոլյուցիոն երգերով, Շուշանիկ Կուրդինյանը ծառայեց աշխատավոր խավերին, հայ դրականության մեջ մտավ իրրև ռևոլյուցիոն պոեզիայի ականավոր դեմքերից մեկը:

¹ Юр. Веселовский, Русское влияние на современную армянскую литературу, 1909, стр. 26.